## Գենդերային վիճակագրության անհրաժեշտությունը

Վիճակագրության մեջ կանայք և տղամարդիկ պետք է «տեսանելի» լինեն: Գենդերային վիճակագրությունը հասարակության մեջ կանանց և տղամարդկանց տեղն ու դերն արտացոլող վիճակագրություն է, որը թույլ է տալիս հաշվի առնել ինչպես կանանց և տղամարդկանց առանձնահատկությունները՝ որպես սոցիալ-ժողովրդագրական խմբերի, այնպես էլ իրականացնել իրավահավասարության և հավասար հնարավորությունների սկզբունքը:

Ելնելով վերոհիշյալից ՝ վիճակագրությունը պետք է տարանջատված լինի ըստ սեռի, միևնույն ժամանակ արտացոլելով հասարակական կյանքում տեղ գտած գենդերային հիմնահարցերը և խնդիրները: Եվ իհարկե, այն պետք է մատչելի լինի սպառողի համար: